

ԻՏԱԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՐՈ
ՀՈԴԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իտալերեն լեզվի դասընթացում առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում հոդի յուրացումը, հատկապես հոդի համակարգից զերծ լեզուներ կրողների համար: Թեև հայերենն օժտված է այդ համակարգով, այդուհանդերձ, իտալերենի և հայերենի հոդերի համակարգերի զուգադրական ուսումնասիրությունը ձևախմբատային և գործառական տեսանկյուններից բավականին հետաքրքրություն է ներկայացնում:

Իտալերենի հոդերի համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մասնական հոդը, որը գործածվում է ոչ թվարկելի գոյականների հետ և առանձնացնում է դրանց ընդհանուր ժավալի անորոշ մասը: Լեզվի ժամանակակից փուլում մասնական հոդը զգալիորեն ընդլայնել է իր իմաստագործական դրսևորումների սահմանները և հանդես է գալիս նաև թվարկելի գոյականների՝ հատուկ և հասարակ անունների հետ: Իմաստային տեսանկյունից մասնական հոդը անորոշ հոդի տարատեսակն է, քանի որ այն առանձնացնում է ոչ թվարկելի զանգվածի մի մասը միայն, անորոշ հոդը, ինչպես գիտենք, առանձնացնում է դասի մեկ անդամին: Չնաբանական տեսանկյունից մասնական հոդը մոտենում է որոշյալ հոդին, քանի որ ծագումնաբանորեն կազմված է di նախդրի և որոշյալ հոդի i, i, la, le, lo, gli, l' ձևերով:

Լեզվաբանության մեջ բազմիցս խոսվել է եզակի անորոշ և մասնական հոդերի իմաստային նմանության մասին: Այսպես, Մ. Գրևիսը նշում է, որ «մասնական հոդն իր արժեքով ոչ այլ ինչ է, եթե ոչ անթվարկելի իրողություն նշանակող գոյականից առաջ կիրառվող անորոշ հոդ, որը ցույց է տալիս, որ խոսքը դրա անորոշ քանակի մասին է»:՝ Ըստ Մ. Գալմիշի մասնական հոդն իր իմաստային արժեքով ավելի մոտ է անորոշ հոդի հոգնակի ձևին, քան եզակիին:՝

Հոդի զուտ մասնական իմաստը հանդես է գալիս որպես ավելի լայն իմաստի՝ քանակական անորոշության արտահայտման մասնավոր դեպք:

* M. Grevisse Le bon usage, Grammaire française, 12^{ème} édition. Paris, 1986, p. 911.

Տե՛ս նաև Է. Օ. Костецкая. Употребление артикля частичного. - "Иностранные языки в школе", М., 1949, № 4, с. 48-50.

** M. Galmiche. Note sur les noms de masse et le partitif. - "Langage française" Paris, 1986, N 72, p. 40-53

Քանակական անորոշությունը քերականական իմաստ է, ի տարբերություն ոչ թվարկելիության, որը բառային իմաստ է :*

Երբ մասնական հոդը չի արտահայտում քանակական անորոշության իմաստ, այսինքն՝ մասնականություն, դրա կիրառումը հանգեցնում է բառիմաստի տեղաշարժի կամ գոյականի քերականական կարգի փոփոխության: Առաջին դեպքում գոյականը հանդես է գալիս փոխանվանական արժեքով, ինչպես՝ *Ho visto un vitello*.

Հորթ տեսա :

Ho mangiato del vitello.

Հորթի միս կերա :

Երկրորդ դեպքում գործ ունենք մասնական հոդի ապագոյականացնող՝ գոյականի միջոցով հատկանիշի իմաստի արտահայտման հետ, ինչպես՝

C'è qualcosa dell'uomo nel cane.

Շան մեջ ինչ-որ մարդկային բան կա :

Անորոշ և որոշյալ հոդերի հետ ունեցած իմաստային ընդհանրություններով և դրանցից բխող գործառական առանձնահատկություններով էլ պայմանավորված է մասնական հոդի գործառության սահմանների ընդլայնումը : Փաստորեն, մասնական հոդը գործառում է քանակական անորոշության քերականական իմաստի և թվարկելիության-ոչ թվարկելիության բառային իմաստների միջև գոյություն ունեցող տարատեսակ հարաբերություններում : Նշենք, որ զուտ մասնականությունն արտահայտվում է քանակական անորոշության քերականական իմաստի և ոչ թվարկելիության բառային իմաստների միասնության միջոցով:

Անորոշ և մասնական հոդերի գործառությային նմանությունը պայմանավորված է ընդգրկման հարաբերությունների առկայությամբ. թվարկելի գոյականների դեպքում այդ գոյականով անվանվող առարկաների դասն ընդգրկում է այդպիսի առարկաների հոգնակիության, անորոշ հոդն առանձնացնում է դրանցից որևէ մեկը կամ բազմաթիվ այդպիսի առարկաներ, ոչ թվարկելի գոյականի դեպքում այդ գոյականով անվանվող նյութի ողջ ծավալը բաղկացած է նույն նյութի տարբեր մասնաբաժիններից, և մասնական հոդն առանձնացնում է այդ ծավալի անորոշ մասը : Այսպիսով, գործառությային առումով, երկու հոդերի սիմետրիկ դրսևորումը առանձնացման գործառությոն է :

* В. Г. Гак. Теоретическая грамматика французского языка. М., 2000, с. 192.

Անորոշ և մասնական հոդերով կիրառված գոյականն ունի **ne** դերանվանք փոխարինվելու հնարավորություն, հմմտ.

Ha preso una mela. – Ne ha presa una.

Նա խնձոր վերցրեց: – Նա դրանից մի հատ վերցրեց:

Anna ha dei dischi italiani. – Ne ha.

Աննան իտալական ծայնասկավառակներ ունի: – Նա դրանցից ունի:

Ho comprato della (= un po'di) frutta. – Ne ho comprata.

Մի քիչ միրգ գնեցի: – Դրանից գնեցի:

Ինչ վերաբերում է երկու հոդերի արտահայտման անորոշության իմաստին, ապա եզակի անորոշ հոդն արտահայտում է որակական, իսկ մասնական հոդը՝ քանակական (ծավալային) անորոշություն, որով ավելի մոտ է հոգնակի անորոշ **dei, delle, degli** հոդին, քան եզակի անորոշին: Պետք է նշել, սակայն, որ ոչ թվարկելիությունը ընդհանրապես մերժում է հոգնակիությանը, ոչ թվարկելի գոյականը միշտ եզակի է: Որպես ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ նյութ և վերացական հասկացությունները նշանակող գոյականները քանակական մակբայներից հետո դրվում են եզակի թվով, օրինակ՝

molta sabbia (շատ ավազ) ,

tanta felicità (շատ երջանկություն) և այլն :

Ուրեմն ոչ թվարկելի գոյականների դեպքում պետք է խոսել ոչ թե թվակարգի եզակիություն-հոգնակիություն հակադրության մասին, որը չի տարածվում այդ գոյականների վրա, այլ թիվ/ոչ թիվ հակադրության մասին, որի առաջին անդամը դրսևորում է եզակիություն-հոգնակիություն, իսկ՝ մասնակցություն-ամբողջականություն հասկացությունների միջոցով :

Սակայն ոչ թվարկելի գոյականը կարող է անցնել թվարկելիների շարքը, հատկապես այն դեպքում, երբ ստանում է որակական բնութագիր, կամ երբ վերջինը ենթադրվում է, ինչպես **del pane** (անորոշ քանակով հաց)

un pane nazionale (ազգային հացատեսակ)

dei pani nazionali (ազգային հացատեսակներ)

del vino (անորոշ քանակով գինի)

un vino italiano (իտալական գինի)

dei vini italiani (իտալական գինիներ) և այլն :

Հասկացության ծավալի սահմանափակումը ըստ նյութի, տեսակի, որակի, ձևի կամ այլ հատկանիշի հանգեցնում է ոչ թվարկելի գոյականը որպես թվարկելի ընկալելուն, այսինքն՝ ոչ թվարկելի գոյականի իմաստը նվազեցվում և սահմանափակվում է (ամբողջացվում է) որոշակի ծավալի սահմաններում* առարկան դրսևորվում է որպես մեկ ամբողջություն, հետևաբար՝ այն կարող է լինել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվով : Որակ, հատկանիշ, երևույթ նշանակող վերացական գոյականները իրենց ենթակարգը փոխելու՝ թվարկելի դառնալու դեպքում, նշում են այդ որակի, հատկանիշի, երևույթի կոնկրետ

դրսևորումներ, հաճախ այդպիսի գոյականները հանդես են գալիս լրացումներով, ինչպես՝

un' intelligenza straordinaria (արտակարգ խելացիություն)

delle preoccupazioni quotidiane (առօրյա հոգսեր)

una bellezza particolare (յուրահատուկ գեղեցկություն)

un silenzio profondo (խոր լռություն) և այլն :

Հայ լեզվաբանական գրականության մեջ մասնականության իմաստի և դրա քերականական արտահայտամիջոցների խնդիրը, սակավ բացատրություններով, ուսումնասիրված չէ: Առաջին հայացքից դա բացատրվում է այն հանգամանքով, որ, ի տարբերություն իտալերենի, հայերենը հատուկ քերականական ձև չունի մասնականություն արտահայտելու համար: Սակայն իրավիճակը միայն առաջին հայացքից է այդպիսին, քանի որ հայերենում մասնականություն արտահայտելու միջոցը հենց ձևի բացակայությունն է՝ զրո հոդը: Հոդին նվիրված ուսումնասիրություններում կամ զրո հոդի վերաբերյալ միայն հպանցիկորեն է նշվում, և այն բնութագրվում է միայն որպես «անորոշի քերականական արտահայտման միջոց հայերենում»: ** Ջրո հոդով մասնականություն արտահայտելու մասին խոսում է Մ. Ասատրյանը: ***

Հայերենի փաստերը ցույց են տալիս, որ զրո հոդը, բացի անորոշություն արտահայտելուց, ունի նաև մասնականության իմաստ, առանձնացնում է նյութ և վերացական իրողություններ նշանակող հասկացությունների անորոշ մասը:

Գետի ափին կանաչը ցորեն են լվանում (Բակունց):

Խղճահարություն է իջնում ինձ վրա, երբ տեսնում եմ նրա զգզված մազերը և ցեխի չիթը այտի վրա (Բակունց):

Բերված նախադասություններում **գոռեն**, **խղճահարություն** գոյականները կիրառված են զրո հոդով, և խոսքը դրանց անորոշ քանակի մասին է:

Բացի դրանից, հայերենի փաստերը ցույց են տալիս նաև, որ այն օրինաչափությունները, որոնք ընկած են իտալերենի մասնական հոդի գործառության հիմքում թվարկելիության և ոչ թվարկելիության իմաստների տեսանկյունից, հատուկ են նաև հայերենի մասնական արժեք ունեցող զրո հոդին. Այսպես՝ ոչ թվարկելի գոյականը կարող է դառնալ թվարկելի, եթե ունի որակական բնութագիր, հմնտ **ջուր** գոյականը հետևյալ օրինակներում.

* Գուրկիչը գտնում է, որ քանակական սահմանափակումը ընկած է որոշյալության կարգի հիմքում: Տե՛ս՝ В. В. Гуревич, О категории "определенность-неопределенность" в книге Проблемы языкознания и теории английского языка, Москва, 1978, № 4, с 27

** Հ. Ջ. Պետրոսյան, Որոշյալի և անորոշի, անձի ու իրի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 52:

*** Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Ա, Երևան, 1970, էջ 243-244 :

Հորթերը վախվխելով, պոչերը վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սարսռալով ետ գալիս (Բակունց) :

Ա՛յ պաղ ջրեր, գուլալ ջրեր,

Որ գալիս եք սարերից ... (Թումանյան) :

Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՞ն սիրում ես,

Սարերդ կորած երկնի մովի մեջ,

Ջրերդ անուշ, հովերդ անուշ...(Ա. Իսահակյան) :

Առաջին օրինակում խոսքը ջրի անորոշ քանակի մասին է, իսկ երկրորդ օրինակում ջուր գոյականի հոգնակի թիվ ստանալը պայմանավորված է միաժամանակ նրա հատկանիշային բնութագրով՝ պաղ, գուլալ և ջրի շատ լինելու հանգամանքով :

Հայերենում ևս հնարավոր է անցում թվարկելիությունից դեպի ոչ թվարկելիություն : Այս դեպքում գրո հոդը, իտալերենի մասնական հոդը, կարող է ունենալ ընդհանրական-հավաքական, փոխանվանական և ապագոյականացնող գործառույթներ : Առաջին օրինակում գրո հոդով առկայացող գոյականը նշանակում է առարկաների չտարրոշված հոգնակիություն, ամբողջություն.

Ընկեր, բարեկամ զընացին, եկան,

Կրկին հաշտության չեղավ մի հընար (Թումանյան) :

Հայերենում, ինչպես նշեցինք, մասնական արժեք ունեցող գրո հոդը կարող է ունենալ նաև փոխանվանական գործառույթ, օրինակ՝

Անճրևոտ օրերին Տերյան (Տերյանի ստեղծագործություններից) եմ կարդում :

Սիրում եմ Շոպեն (Շոպենի ստեղծագործություններից) նվագել :

Ինչ վերաբերում է գրո հոդի ապագոյականացնող գործառույթին, այսինքն՝ հատկանիշ արտահայտելու նպատակով մասնական արժեք ունեցող գրո հոդի կիրառմանը, ապա հայերենում հնարավոր է այս տիպի նախադասություններ .

Նրա մեջ աղվես (աղվեսային ինչ-որ բան) եմ տեսնում :

Այսպիսով, կարելի է ասել, որ մասնական հոդի իմաստագործառական սահմանների ընդլայնումը կապված է գոյականի թվարկելիության-ոչ թվարկելիության իմաստների, թվի կարգի և դրա մերժման միջև առկա գործառույթային դրսևորումների հետ. իտալերենի մասնական հոդի գործառույթային բոլոր դրսևորումներին համապատասխանում են հայերենի մասնական արժեք ունեցող գրո հոդի գործառույթները :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Դ. Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1974, հ.2 :
2. Աբրահամյան Ա. Գ., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981 :
3. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 1983 :
4. Խաչատրյան Ա., Ե., Հայերենի որոշիչ հոդի մի շարք առանձնահատկություններ, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1975, հ.4 :
5. Պառնասյան Ն., Ձևաբանական և բառաբերականական համանիշները ժամանակակից հայերենում, «Հայոց լեզվի կառուցվածքը» գրքում, Երևան, 1975 :
6. Պետրոսյան Դ. Ջ., Որոշյալի և անորոշի, անձի և իրի առումները հայերենում, Երևան, 1960 :
7. Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969 :
8. Սարգսյան Ա., Հայոց լեզվի քերականություն. Ձևաբանություն, Երևան, 2004 :
9. Гак В. Г. Теоретическая грамматика французского языка. Москва, 2000.
10. Гуревич В., О категории "определённость-неопределённость" в кн. Проблемы языкознания и теории английского языка, Москва, 1978, 4.
11. Dardano M., P. Trifone, Grammatica Italiana, Zanichelli, Bologna, 1999.
12. Moretti M., Consonni D., "Lingua Madre", Grammatica Italiana, Societa Editrice Internazionale, Torino, 1976
13. Serianni Luca, Grammatica Italiana. Utet, Torino, 1999.
14. Gordon P., The Acquisition of Syntactic Categories: The Case of the Count Mass Distinction. MIT, 1982.